ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես աբեղա Պողապալյանը՝ «Ուխտս դիրք և կատարեցէք բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-ԻՆ, ՇԱԲԱԹ, Եթովպիայի հայոց հոգևոր հովիվ հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Քեշիշյանը, որն ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում, մեկնեց Մոսկվա, վերադառնալու համար իր պաշտոնատեղին։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը՝ «Տեսէք և զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից իցեն կեանք նորա» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՇԱԲԱԹ, «տօն սրբոց առաքելոցն և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Եղիշե աբեղա Գարաջյանը։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ՇԱԲԱԹ, Վեհափառ Հայրապետի հրամանով, գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի ընկերակցությամբ, հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը մեկնեց Բաքու՝ որպես առաջնորդական փոխանորդ։

Գերաշնորհ Տ. Սահակ սրբազանը, առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետին ներկայացնելուց հետո թեմական խորհրդին և հավատացյալ ժողովրդին, երկուշաբթի, դեկտեմբերի 4-ին, վերադարձավ Մայր Աթոռ։

***

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստում արձանագրվեց Եղիշե վարդապետ Սարգսյանի 1961 ապրիլ 17 թվակիր գրությունը, որով նա հրաժարվում էր հոգևոր ասպարեզից։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը միաձայնությամբ որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետից նրան կարգազուրկ հայտարարել և դասել աշխարհականների շարքում՝ Սարգիս Սարգսյան իր նախկին անունով։

Վեհափառ Հայրապետը 1961 թվականի նոյեմբեր 25 թվակիր վճռով հաստատեց Գերագույն Հոգևոր Խորհրդի սույն որոշումը։

ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԿ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ